

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис. Редакция «Мелк».
Կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լիցզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իրաւաբանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր այժմեան պատանիները. — Ներքին Տեսչութիւն. Պատասխան երևանի քաղաքային վարչութիւնից. Հայոց Թատրոն. Ներքին Լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին Լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — Հեռագրեր. — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Շեփրէլի հարկաւանայ յօդուները.

ՄԵՐ ԱՅԺՄԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Մենք յիշում ենք որ 20 կամ 25 տարի առաջ, երբ այն սերունդը, որին մենք ենք պատկանում, պատանեկութեան մէջ էր, պատանիների շրջանում տիրում էր անսահման սէր դէպի ուսումը: Պատանիները համոզված էին որ նախ ուսումը հարկաւոր է նոյն իսկ ուսումնական համար, և երկրորդ որ առանց ուսման կանգնել մէջ չէ էլ կարելի առաջ գնալ: Մենք ամենքս համոզված էինք որ ինչքան աւելի հմուտ թիւնանան, ընդունակութիւններ, ինչքան աւելի ուսում ձեռք կը բերի մարդը իր թէ պատանեկութեան և թէ երիտասարդութեան հասակում: — այնքան աւելի կը դիւրանայ մարդու համար իր ապագայ կեանքի ճանապարհը: Մեր ժամանակ պատանիներն այսօր էր ուսման վրա առհասարակ, մանաւանդ միջնակարգ ուսման վրա, որպէս մի կենսական անհրաժեշտութեան վրա, ոչ թէ միայն գործնական, բայց և բարոյական տեսակէտից, նայում էր բարձրագոյն դպրոցների վրա, որպէս գիտութեան սուրբ տաճարների վրա:

Այժմեան պատանիները բոլորովին այլ են. նրանք նախկին սերունդից կատարելապէս տարբեր քաղաքաւոր ունեն ուսման վրա առհասարակ:

Գուցէ այն պատճառով որ այժմ մեր հասարակութիւնը մի տեսակ անցողական դրութեան մէջ է գտնվում և ուսումնական հերիտասարդներից շատ շատերը տարբերութիւն ունեն գործադրութիւն չեն գրտնում կեանքի մէջ իրանց ձեռք բերած հմուտութիւնների համար, դիպում էլ ունենալով, և նոյն իսկ բարձրագոյն դպրոցների դիպում, մեծ մասամբ ոչինչ պարագմունք

չեն գտնում հասարակութեան մէջ, — մեր այժմեան պատանիների մէջ հետզհետեւ կողմնակի է այն համոզմունքը որ ապրելու, աշխատելու, կեանքի մէջ առաջ գնալու համար ուսումը իսկապէս աւելորդ բան է: Եւ մեր այժմեան պատանեկութիւնը ոչ թէ միայն բարձրագոյն ուսման վրա է նախընտրում որպէս մի աւելորդ բան, չապրելութեան, ժամանակի և մտաւոր ու բարոյական ոյժերը խլող ժամապաճառութեան վրա, բայց նոյն իսկ միջնակարգ ուսումն էլ աւելորդ բան է համարում:

Ճշմարիտ է, մեր բոլոր միջնակարգ դպրոցները լի են աշակերտներով, ամեն տարի աշակերտների ընդունելութեան և հարցաքննութիւնների միջոցին անթիւ անհամար խնդրատուներ և ցանկացողներ են լինում այս կամ այն միջնակարգ դպրոցը մտնելու և միայն տեղի պակասութեան պատճառով վերջ ի վերջոյ այդ բազմութիւն ցանկացողներից շատ քիչներն են ընդունվում: — բայց դէպի միջնակարգ դպրոցների ձգտումը կարելի է բացատրել ոչ թէ նոյն իսկ պատանիների և երիտանների ցանկութեանը ուսումն ստանալու, ոչ թէ ուսման ծախսով, այլ ծնողների զորմամբ ու հրամանով:

Բայց եթէ ինքներդ հետաքրքրվեք ու երես առ երես խօսացնեք մեր ժամանակակից պատանուն նրա հայեացքների մասին, ուսման նշանակութեան վերաբերմամբ, դուք կը գտնանաք թէ ո՞ր աստիճան մեր ժամանակակից պատանին ունի արդէն յուսահատ, ծերացած հայեացքներ կեանքի և ուսման վրա:

Մեր այժմեան պատանին ներկայացնում է իրանք մի տեսակ ծերունի, որ արդէն ամեն բան փորձել, վայելել է կեանքի մէջ, որի համար կեանքը չունի արդէն որ և է հրապուրել զաղտնիքներ: Նա ուսման վրա, առհասարակ, նայում է որպէս մի աւելորդ, ստիպողական, աննպատակ բանի վրա. նա 14 կամ 15, շատ շատ 16 տարեկան հասակում երբ անցնել սերունդը դեռ սովորում էր և դեռ ձգտում էր աւելի էլ սովորելու, արդէն պատրաստ է ուսումը թողնել և ապրել սկսել: Նա արդէն չունի պատանու թարմութիւնը իր մտքերի, իր համոզմունքների ու ձգտումների մէջ:

այլ ունի հասակ առաջ, գրեթէ պառաւած մարդու գործնական, դրական հայեացքներ: ինչ հարկաւոր է ուսումն շարունակել, պարզ լսում էք դուք մեր պատանու բերանից, աւելի լաւ չէ՞ ժամանակս չը կորցնեմ և այժմից, որքան էլ լինի, փող սկսեմ աշխատել: Կամ դուք յանկարծ լրտում էք պատանու, տասն և չորս, տասն և հինգ տարեկան պատանու բերանից հետեւեալ խօսքը. «Ուսումը մարդուն ոչինչ չէ տալիս, բարձրագոյն դպրոցների դիպումներն ունեցողներն էլ գործ չեն գտնում կեանքի մէջ, ուրեմն աւելի լաւ է ուսումը թողնել և անմիջապէս սկսել փող աշխատել, անմիջապէս սկսել ապրել:»

Եւ ուշադրութեան արժանի այն է, որ այդպէս շտապում են ապրել ոչ թէ միայն ունեւոր ծնողների, բայց և չքաւոր ծնողների որդիք: Տասն և չորս տարեկան պատանին, գրեթէ մանուկը, արդէն զգուշացնում է կեանքից, նրան այլ ևս ոչինչ չէ հետաքրքրում: Նա արդէն ամեն բան փորձել, վայելել է, նա այլ ևս չունի կեանքի մէջ մտաւոր կամ բարոյական ձգտումներ, չունի ի դէպ չեւեր, — նա ունի միայն մի նպատակ, շուտով ապրել սկսել, — ինչպէս ապրում են մեծերը: Եթէ նա հարուստ մարդու որդի է, նա շատ բնական է գտնում որ ոչինչ չը սովորած, ոչինչ չանելով, ինքն ապրի հօր պատրաստ միջոցներով: Եթէ նա չքաւոր մարդու որդի է, նա պատրաստ է ուսումը թողնած առաջին պատահած վաճառականի խանութում ամսական տաս, նոյն իսկ հինգ ռուբլի ստանալ, միայն թէ անմիջապէս սկսի ապրել և չը շարունակի իր կարծիքով աննպատակ ուսումը:

Եւ ահա այն տխուր երևոյթը որ մենք այժմ նկատում ենք մեր պատանեկութեան մէջ. ամենքը շտապում են ապրել և պատանին էլ, գրեթէ մանուկը, ուսումը թողնած, ուսումը աւելորդ բնու, աննպատակ բան, ժամապաճառութիւն համարելով, նոյնպէս շտապում է ապրել: — արդէն 14, շատ շատ 15 տարեկան հասակում ներկայանալով մեզ որպէս դրական հայեացքների, գործնական, գրեթէ ծերացած, պառաւած մարդ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԻՑ

«Մշակ» լրագրի 92-որդ համարի մէջ տպված է թղթակցութիւն, որ ուղարկել է ոմն Բ. Մ. Յիշեալ թղթակցը մեղադրում է երևանի քաղաքային վարչութեանը, մանաւանդ քաղաքային և քաղաքային խորհրդարանի ձայնաւորներին, պարտազանցութեան մէջ, այն է.

1) Թէ Աստաֆեան փողոցը փոշիոտ է:
2) Իբր թէ քաղաքային վարչութիւնը բերել է տուել Գիլիշանից քաղաքի հաշուով և անկել է Աստաֆեան փողոցում ակացիայի անկիւղ, որոնցից շատերը չորացել են, և թէ այդ անկիւղը աւելցրել են քաղաքի պարտքը այնպէս զգալի, որ հարկաւոր է գտել այ. թղթակցից այդ հանգամանքը հրատարակել մամուլի միջոցաւ, պահարակել վարչութիւնը ի դուր ծախսերում, երևանոց ուղը գործնել այդ հանգամանքի վրա, որպէս զի քաղաքը իրան հետ պահէ այնպիսի կորստաբեր ծախսերից և կարող լինի իր հաղաւոր պարտքերը վճարել. մի և նոյն ժամանակ այ. թղթակցիցը, ամենահարկաւոր գտնելով փողոցի երկու կողմն ծառեր անկելը որպէս զի նա վերադարձած ժամանակ կարողանար յիշեալ ծառեր հող ստուերի տակ զգոնել և բաւականութեւն զգալ, դատում է, թէ կարելի էր ուսի և թթենի ծառեր անկել առանց ծախսելու քաղաքի փողոցից:

3) Թէ կշռորդի հրապարակի վրա, ուր վաճառում են զանազան մրգեր, սաստիկ անմաքրութիւն է և թէ մաքրութեան համար վերահսկողութիւնը չափազանց թույլ է:

4) Թէ «այաղչի» կոչվածները գիշերով առնում են միջերեւոյն և թանգ դնով վաճառում են ժողովրդին և թէ քաղաքային որ այաղչու հետ դատ է, նրան թույլ է տալիս առնել և վաճառել, իսկ որի հետ դատ չէ՞ նրան արգելում է այդ:

5) Թէ երկու արկղներով միայն 5 սաժէն տեղ Աստաֆեան փողոցի վրա քաղաքային խորհրդարանի տան առաջ ջուր են սրսկում:

6) Թէ քաղաքում շատ խուլ փողոցներում լապտերներ չեն վառում մոլթ գիշերներում:

և 7) Թէ իրաւաստները լոկ անուն են կրում և իրանց պարտաւորութիւնը չեն ճանաչում:

Անանուն թղթակցը վերոյիշեալ յօդուածում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇԵՎՐԵԼԻ ՀԱՐԻՐԱՄԵՆԱՑ ԶՈՐԵԼՆԱՆԸ

Ֆրանսիական մեծ գիտնական Շեվրէլի հարկաւորներն երեկ լրացաւ, և փարիզը, իրան յատուկ փայլով տօնեց իր մեծ գիտնականի այդ նշանաւոր օրը: Տօնակոթութիւնը սկսվեցաւ դեռ օգոստոսի 30-ին, և մենք կաշխատենք նկարագրել այդ տօնը այն կարգով, որ կարգով նա կատարվեցաւ:

Պէտք է ասած, որ հռչակաւոր յօդուները առաւօտից գեղեցիկ տրամադրված էր: Նախաճաշից առաջ եղած ամբողջ ժամանակը նուիրվեցաւ աշխարհի ամեն ծայրերից ստացված հեռագիրների բանալուն և կարդալուն: Ամբողջ կրթված աշխարհի կողմից այդպիսի մի համակրութիւն այն աստիճան զգացեցրեց ծերունուն, որ նրա բերանից դուրս թուան իր աղախուն (որը հեռագիրներ էր կարդում) ուղղած հետեւեալ խօսքը. — Դա արդէն չափազանց է: «Ոչ, ոչ, ես ամենին չեմ սպասում այդ բոլորը»:

Բայց ան 10 ժամն է և Շեվրէլ սովորաբար սկսում է նախաճաշել: Նրա համար այդտեղ էլ մի դուրեկան օրհրդից պատրաստեցին. նրա մօտ նախաճաշում էին նրա թոռը իր կնոջ հետ միասին (թոռը 32 տարեկան է, նա երեք որդի ունի, իսկ աղջիկ թոռը 5 զաւակ ունի):

Նախաճաշից յետոյ նա, իր Անրի անունով որ-

դու ուղեկցութեամբ, որը արդէն պատկանելի ծերունի է, գնաց արուեստների և մանուֆակտուրայի խորհրդակցական մասնաժողովը: Ժողովրդի մեծ բազմութիւն սպասում էր նրան մուտքի մօտ և հանդիպեց նրան ողորդված աղաղակներով «Vive Chevreul» (կեցցէ Շեվրէլ): Մասնաժողովի մուտքի մօտ դիմաւորեց նրան քաղաքապետը, որը կարգաց մի կարճատեւ ճառ: Շեվրէլ կարծես զգացված էր և այն ճառի մէջ, որով շնորհակալութիւն էր յայտնում իր ընկերակիցներին, հաստատապէս յայտնեց, որ չը նայելով իր 100 տարեկանին, նա իր մէջ դեռ ևս եւս անոն է զգուշ: Ի միջի այլոց նա յայտնեց և եթ ընտանեկար պատմեց մի քանի յիշողութիւններ իր երկար կեանքից:

Ժամը 2-ին Շեվրէլին արդէն սպասում են աղաքային երկրագործական ընկերութեան մէջ: Այստեղ պէտք է նկատել, որ մեծ գիտնականը 1832 թ-ից այդ ընկերութեան անդամ է, իսկ 1849 թ-ից — նախագահ:

Ընկերութեան շինութեան մուտքի մօտ կանգնած է կրկին ժողովրդի խուռն բազմութիւն, կրկին աղմկալի օվաղիաներ: Զգացված Շեվրէլ չորս կողմը գլուխ տալով, արտասանում է. «Էլ շնորհակալ եմ զաւակներս, շնորհակալ եմ»:

Նստի դահլիճը մտնելու ժամանակ նրան ընդունում են երկարատեւ ծափահարութիւններով: Նրան նստեցնում են էստրադայի վրա դրած բազմութեան, որ զարդարված է գեղեցիկ ծաղիկներով: Նրա կողքին գտնվում էին Լէօն Սէ և շատ ուրիշ հռչակաւոր անձինք: Այդ ընկերութեան 11-րդ բաժնի նախագահները մատուցին նը-

րան չքեղ փնջեր: Նիստը բացվեցաւ Լուի Պաստի պատգամաւորի ճառով, որի մէջ հետաքրքիր կենդանի դոյներով նկարագրեց բազմախառն այնքան գիտնականի կեանքը: Դրանից յետոյ սկսում է խօսել ընկերութեան փոխ-նախագահ Լէկուաիէ. «Կրկին մի քանի ժամ, — ասում է նա, — և դուք ժիր, քաջաւորը և հարուստ յիշողութիւններով կը մտնեք ձեր կեանքի երկրորդ հարկաւորմանը: Կրկին մի քանի ժամ, և Ֆրանսիան, արդարութեամբ պարծնալով իր արժանաւորագոյն որդիներանցից մէկով, կը տօնէ ձեր ծննդեան հարկաւորմանը: Երեւանը: Ապա հետեւում է նկարագրել մեծ գիտնականի կեանքը: Դրանից յետոյ ընկերութեան գլխաւոր քարտուղարը կարդում է Մոսկվայի բընագէտների կայսերական ընկերութեան շնորհաւորական հեռագիրը, Նանսի քաղաքի ուսանողների ընկերութեան շնորհաւորական հեռագիրը, որը ի յիշատակ հարկաւորմանի տօնակոթութեան առանձին մէղալ ուղարկեց: Ապա Բրոնիար երկրտաւարը գիտնականների մասնաժողովի կողմից մի ճառ արտասանեց: Այդ ճառի մէջ հետաքրքիր պէս աշխարհիս բոլոր գիտնականներից հնագոյնին, բայց և որպէս ուսանողներից հնագոյնին: Իրաւ, Շեվրէլ վաղուց անուանվում է Doyen des étudiants de France. Այդ բանին Շեվրէլ պատասխանեց մի ճառով, որ տեղի մօտ կէս ժամ: Խօսեց զանազան «հին» բաների մասին, ցատկով յիշեց այդ դարու Ֆրանսիայի քաղաքական պատերազմների մասին, խօսեց օպտիմիզմի յաղթութեան մասին պէսիմիզմի դէմ և վեր-

ջացրեց իր ճառը համաշխարհային խաղաղութեան հրաւեր կարգաւոր: Այդ խօսքերը՝ ծածկվեցան աղմկալի ծափահարութիւններով. շատերը խուռնվում էին նրա շուրջը, ցանկանալով սեղմել նրա ձեռքը, տիկիները համբուրում էին նրա ձեռքերը, բայց նա բարեբարութեամբ բողբոջում էր դրա դէմ:

Այդտեղից նա գնաց գիտութիւնների ակադէմիան: Նոյն օրը նրան օվաղիաներով ընդունեցին նրան: Նախագահի տեղակալը դիմեց նրան մի ճառով: Մենք իր բերեց միայն մի կտորը այդ ճառից, որը, ինչպէս և բոլորը, թուում է գիտնականի կեանքի ամենաազնի ընկնող վայրկեանները:

«Թույլ տուէք ինձ, թանգագին ուսուցիչ, ասում է այդ հետաքրքիր, տեղափոխվել այն հեռու ժամանակը, երբ ես, դեռ ևս մանուկ հասակում, տեսնում էի ունեւոր ընտանիքներին, որոնք, գիշերը հասնելիս, ստիպված էին լինում բաւականաչափ բարբարոս ճրագորի լոյսով: Ձեր շնորհիւ այդ բոլորը արագութեամբ փոխվեցաւ և, սկսած ամենաաղքատ խրճիթից մինչև ամենահարուստ տունը, իւրաքանչիւրը ունի գեղեցիկ բոց, որով դուք փոխարինեցիք ծխվող ճրագը: Այդ խօսքերից յետոյ հետաքրքիր համարեց Շեվրէլին գիտութիւնների ակադէմիայի կողմից: Վերջապէս տօնը վերջացաւ մի փառաւոր երեկոյնով աղաքային օպերայում, ուր պատրաստված էր հոյակապ ապոֆեօզ:

Նախ քան օգոստոսի 31-ի ծննդեան իսկական օրվա նկարագիր սկսելը, մի քանի խօսք ասեց իրան Շեվրէլի մասին: Նա ծնվեց Անժէ (An-

քաղաքային Ամարային թատրոնում: Խուսմը կազմակերպված է այնպիսի անձնակազմով, որի անդամները, որոնք գրեթե բոլորն էլ ծանօթ են թիֆլիսի հասարակությանը: Անձանոթ է մեղ միայն տ. Հեքիմյան որ գալու է այս օրերս Պոլսից. տիկնոջ ամուսնան է առաջին դրամատիկական (այսինքն խաղալու է այն դերերը որ կատարում էին հանգուցեալ օր. Աստղիկը և տ. Հրաչեան): Միւսները, ինչպէս յիշեցինք, ծանօթ են մեզ: Դոքա են՝ օր. Վիրգիլիա Գարագաշեան, տ. Սաթի-նիկ Չաչկեան, Զարեկ, օր. Վարդուհի. պ. պ. Ա. Ղազարեան, Մանգեան, Զաչկեան, Աւանես, Տէր-Գաթեան, Աղայեան, Միրազեան, Պարոն-Սարգսեան, Վրոյր և այլն: Յուշարարն է պ. Մատի-նեան: Մինչև մեծ պատը ներկայացումները կը տրվեն թիֆլիսում, իսկ այնուհետև եթէ իրա-ւունք ստացվի, ամբողջ խումբը կը գնայ Բագու:

Վերջին երեք-չորս տարիներս թատրոնական գործը այնպիսի անձնակազմով ինքնուրույն ձեռքին էր, որոնք հասարակութիւնը բոլորովին հեռաց-րեցին թատրոնից և դրամատիկական ակումբի ղեկավարներին մեծ ջանք է հարկաւոր գործա-դրել որ նորից գրաւեն հասարակութիւնը: Բե-պերտուարի վրա պէտք ուշադրութիւն դարձնել, պէտք է աշխատել ֆրանսիական լատինացի դուրս եկած փոստ մեղադրանքից, ու դոցա կերպով ձեռն պատմական անխառն պիէսանե-րից ազատ պահել բեմը: Աւելի ուշադրութիւն պէտք է դարձնել ինքնուրույն պիէսաների վրա, որոնք առկած կը լինեն կենսական, պէտք է խոր-խուսել նոր հեղինակներին: Օտար բեպերտուարից մեր կարծիքով պէտք է առնվեն միայն կլասիկա-կան ու նոր բեպական ուղղութեան պատկանող հեղինակութիւնները: Աւելի պէտք է ուշադրու-թիւն դարձնել անամբի վրա, ինչքան էլ պ. Ա. տ. Բ. լաւ լինեն, բայց եթէ բոլոր միւսները իրանց տեղումը չեն, գեղարուեստական տպաւո-րութիւնը կորուստ է:

Անցեալ թատրոնական կոմիտէի փորձը ցոյց տուց թէ որքան դժբախտներն մի քանիսն ին-տրիգաները և իրանց վրա ունեցած մեծ կար-ծիքից առաջ եկած ինքնասիրութեան արգասիք-ները խոչնդոտներ էին լինում գործին. նրա ա-ռաջ կարելի է բռնել միայն շտապներով: Ի հարկէ տուգանքների պրինցիպի մտցնելը մի օր և է ձեռնարկութեան մէջ դա մի փոքր անբարոյա-կան բան է, բայց ստիպած պէտք է հաշտել դո-րա հետ: Մենք առիթ ունեցանք տեսնել դերա-սանների հետ կապված պայմանագրութեան օրի-նակը և կարծում ենք որ ակումբի վարչութիւնը սխալվում է չը մտցնելով նորա մէջ շտապների մասին համապատասխան յօդուածները: Միայն 9-րդ յօդուածում ասած է «Ամեն մէկ իմ (այսին-քն դերասանի) անվայել կամ այնպիսի արար-մունքի համար որ կարող է վնասել թատրոնա-կան գործին, կոմիտեան իրաւունք ունի քանդել այս պայմանագրութիւնը, առանց որ և է վար-ձատրութեան»: Լաւ, բայց ինչ հասկանալ «ան-վայել արարմունքներ» խօսքով, օրինակի համար դե-րասանը ուշանում է կամ չէ գալիս կրկնողու-թիւններին կամ ներկայացումներին: Միթէ մի օգտակար դերասան ուշանալով մի քանի անգամ, բեմը պէտք է զրկվի նորանից, բայց անպատիժ էլ չէ կարելի թողնել նրան. ինչ արած:

Այս մի քանի նկատողութիւնները անելով, յա-ջողութիւն ենք ցանկանում ակումբի վարչու-թեան և յոյս ունենք որ հասարակութիւնն էլ, իր թատրոն յաճախելով, կը քաջալերի թէ վարչու-թեան անդամներին, թէ դերասանական խումբին և թէ զաւ տարի կուենանք աւելի լիակատար խումբ:

Nemo

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք պ. Փիլիպպոս Վարդանեանի գերմաներէնից, Ֆրեդրիկ Դիլի-թից թարգմանած երկու գրքեր. մինը «Համբի-Ռիխտարը», իսկ միւսը «Համբի իլիակալը»: Թարգմանութիւնը ղեկեցիկ և ձուլ լիզուով է կատարված, մի և նոյն ժամանակ այն աստիճան հասկանալի և ղուրկեան լիզուով, որ գրքերը շատ հեշտութեամբ և նոյն իսկ յափշտակութեամբ են կարդացվում: Տպված են թիֆլիսում, ներկայ 1886 թ-ին, Յովհաննէս Մարտիրոսեանի տպարա-նում: Գրքերը պատկերազարդ են և հին յունա-կան գիցարանական պատկերները շատ աջող կերպով են դուրս բերված: Գրքերից մինի գինը 1 ռուբլի է, միւսինը 1 ռուբլի 20 կոպէկ:

Միքիլի համալսարանը կը բացվի միւս տարի: Առաջին տարին, ինչպէս հաղորդում է «Варшав-ский Купербер» լրագիրը, կը բացվին միայն բժշ-կական և իրաւաբանական ֆակուլտետները:

«Собрание Узаконовий» պաշտօնական հրատա-րակութեան մէջ արդէն տպվեցաւ Բագուի մէջ բօրաւ հիմնելու կարգադրութիւնը:

«Մշակի» անցեալ համարի հեռագիրներից երե-ւում է, որ արգարագատութեան միջնորդութեան կառավարիչը արդէն դուրս գնաց Պետերբուրգից: «Заря» լրագրում կարդում ենք, որ պ. Մանա-սէլին, յիշեալ միջնորդութեան կառավարիչը, շու-տով կիեմ է դալու, հարաւ-արեմտեան վոյժով դա-տաստանական հիմնարկութիւնները վերաճնելու համար:

Մի քանի օր առաջ թիֆլիսի քաղաքային հի-ւանդանոցում մեռաւ ատամնաբոյժ Վալտեր, որը մեղադրված էր գիտութեամբ կրակ զցելու մէջ, ապահովագրամը ստանալու համար: Վալտերի գործը իր ժամանակին թիֆլիսում մեծ ուշադրու-թիւն գրաւեց: Վալտերի ջանքի կինը այժմ հոգե-կան հիւանդութիւն ունի և գտնվում է քաղաքա-յին հիւանդանոցում:

Օգոստոսի 30-ին, Երևանի նահանգապետ Դա-ւիթով ստացաւ գեներալ-լեյտենանտի աստիճան: Նոյն աստիճանը ստացաւ և գեներալ Տէր-Ստա-տուրով:

Անցեալ օգոստոսի 25-ին ՂՈՒԲԱՅԻ մեր թըղ-թակիցներից մինը, գնալով քաղաքից 40 վերստ հեռավորութեամբ գտնվող թուրքաց թաւաքի ա-նուանված գիւղը, գրում է մեզ, որ այդ գիւղում կան մինչև այժմ հայոց հանգստարան և եկեղեցու աւերակ: Գիւղի ապեղեղեղ կրում են մինչև այժմ հայոց ծագումն առնողները, ինչպէս, օրի-նակ՝ Ակուր-բաղ, Արթուր-բաղ և Եղիա-բաղ: «Թուրքերից մի քանիսն ինքին հարցրի, աւելացնում է թղթակիցը, և ինձ պատասխանեցին որ յիշեալ թաւաքի գիւղում հայերն են եղել բնակվում, և խաների ժամանակ բռնի կերպով ընդունել են մահմետականութիւնը, սուլանի ազանդի: Թաւաքի գիւղը շատ հիւանդի տեղ է, չորս կողմը չըլա-պատված է այգիներով, ամեն կողմից հոսում են գետակներ, կանաչ և ծառօտ դաշտերի միջով»:

ՆՈՒ-ԲԱՅԱՅԵՏԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Զը նայելով որ ուրիշ տարիները օգոստոս ամսի մէջ այստեղի բոլոր արտերը քաղած, վերջացած են լինում, այս տարի կանաչի ցուրտ լինելու պատճառով, դեռ քաղը օգոստոսի 25-ին չէր սկսվել և հետեւապէս հողագործները դեռ չէին կարող աւարել հացի ձեռքը: Բերքը բաւարար չէ երևում. ցորենի խալվալը (30 պոտը) կրկին բարձրացաւ մինչև 15 ռուբլի, իսկ գարին 7 ռուբ-լի: Բայց ափսոս որ երկրագործները էժան գնով արդէն վաղօրոք ծախել են իրանց բերքը»:

Մեզ գրում են, որ Նոր-Բայազէտի երկրասեան ծխական դպրոցներում դաստառութիւնը շուտով սկսվելու է: Հոգաբարձուները հաստատվեցան: Թղթակիցը լսել է, որ ծխական դպրոցների հա-մար դասագրքերը, վեճակաւ կաթիլովկոտի կար-գադրութեամբ, տպագրվելու են ԽՅմիսանի տպա-րանում:

Այս տարի, ինչպէս մեզ գրում են, Ղուբայի գաւառում ցորենի առատութիւն էր, այնպէս որ կարելի էր առնել ցորենի պուրը 35 կոպէկից մինչև 40 կոպէկ: «Բայց ահա, շարունակում է մեր թղթակիցը, բագուաբնակ պ. Մամիկոնեանցի և Տէր-Միքէլեանցի գործակալները գալով պա-տեղ, սկսեցին մեծ քանակութեամբ ցորեն առնել և անմիջապէս ցորենը սկսեց թանկանալ, այնպէս որ պարսներին աջողվեցաւ առնել 45-ից մինչև 50 կոպէկ պուրը: Մրա պատճառն այն է, որ Ղուբա մի փոքրիկ քաղաք լինելով, երկու օտար մարդիկ յայտնվելուն օրս, մասնաւոր երբ լսեցին թէ բան առնելու համար են եկել, բերանից բե-րան անցնում է այն լուրը որ իրր թէ ամբողջ կովկասում և Ռուսաստանում ցորենը թանկանա-լով, մարդիկ ստիպված են Ղուբա դալ, այստե-ղից ցորենը տանելու: Վերջապէս, ժողովրդի մէջ դժգոհութիւն է յայտնվում որ ուրիշ տեղից եկած պարսները թանկացրել են առաջին հարկաւո-րութեան պիտոյը: Ժողովուրդը դիմում է դաւա-ռապետին գանգատով նոր եկածների դէմ: Դատերը,

որոնք այստեղ եկած են ցորեն առնելու, տեսնե-լով տեղիս թէ հայերի և թէ թուրքերի այդ տե-սակ վայրենի վարմունքը, որ առաջ է գալիս ի-րանց տգիտութիւնից, թողնում են քաղաքը և հեռանում են այստեղից, ոչինչ ցորեն չառնելով»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Սեպտեմբերի 9-ին Գլադստօնին կը ներկայա-ցվի մի խնդրագիր իրլանդիայի կանանց կողմից: Այդ խնդրագիրը կազմված է Գուլիսի լորդ-Մէրի կնոջ նախաձեռնութեամբ: Խնդրագրին ստորագրել են մինչև հինգ հարիւր հազար կանայք, որոնք պաշտպանում են իրլանդիայի օրէնսդրա-կան ազատութիւնը: Խնդրագիրը այնքան ահագին և ծանր է, որ չորս մարդ հազիւ կարողանում են բարձրացնել: Խնդրագիրը կը ներկայացնէ Գլա-դստօնին իրլանդացի կանանց պատգամաւորու-թիւնը:

—Սպանիայում որմնադիրները և քարտաշնե-րը մի քանի անգամ գործադուլ արեցին: Բարդե-լոնիայում տեղի ունեցան մի քանի խառնակու-թիւններ: Հարտարապետները և կապալառուները ժողով կազմեցին և վճեցին մերժել որմնադիր-ներին խնդրը, որով նրանք ուզում են քաջանել աշխատանքի ժամերը: Խառնակութիւնները շա-րունակվում են:

—Շվեյցարիայի Բերն քաղաքում, օգոստոսի 26-ին, ինչպէս հաղորդում են լրագիրները, բաց-վեցաւ «Հեղինակների իրաւունքները օրոշող» ժողովը, նախագահութեամբ Գրոյի: Փորձախա-գան էր Ֆրանսիայի ներկայացուցիչը: Նա մի ճառ խօսեց, որի մէջ յիշեց այն բոլոր ջանքերը, որոնք գործ են դրուած գրողներին գրականական իրաւունքները պաշտպանելու համար, և որի հա-մար պէտք կայ կազմելու մի միջազգային պա-մանագիր:

—Եգիպտոսից գրում են, որ Գոնգօլայում սար-սախիւն սով է: Մարդակերութեան դէպքեր են պատահել:

—Նիւ-Եօրկից հեռագրում են, որ Չարլստո-նում նորից երկրաշարժ եղաւ: Հարաւային-կարօ-լինայում Սոմմերվիլ աւերակ դարձաւ: Գետինը շատ տեղ պատռված է և արտադրում է զանա-զան ստորերկրային նիւթեր: Դատ տեղ գետինը բարձրացել է, շատ տեղ էլ ցածրացել: Սոմմեր-վիլի ջրհորները, որոնք համարեա չորացել էին, առաջին հարուածից յետոյ լցուցան առատ ջրով: Յուսահատութիւնը ընդհանուր է: Միացեալ-Նա-հանդերսում կազմվեցան յանձնաժողովներ այս թշուառների օգնելու համար:

—Լոնդոնից հաղորդում են, որ նոր միջնա-տրութիւնը, իբրեւ պատասխան իր վրա բարձած մեղադրանքներին, շուտով կը յայտնի այն նոր կազմակերպված յանձնաժողովների մասին, որոնց պարտաւորութիւնը կը լինի վերաքննել պետու-թեան երևույթի հաշիւները պահող միջնատրական բերօնների գործունէութիւնը:

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ օգոստոսի 28-ին Միլիտարում տեղի ունեցաւ իր-լանդացի կաթիլի կալիսկոպոսների ժողովը: Ժո-ղովը Գլադստօնին յայտնեց իր երախտագիտու-թիւնը՝ նրա իրլանդական քաղաքականութեան համար: Ժողովը այն միտքը յայտնեց, որ Անգ-լիայի և իրլանդիայի բարեկամութիւնը և միու-թիւնը այն դէպքում միայն կարող է գոյութիւն ունենալ, երբ իրլանդիան կուենայ իր սեփական ներքին վարչութիւնը և օրէնքները: Ժողովը մի-անգամայն անհիմն համարեց այն միտքը, որ իբրեւ թէ կաթիլի իրլանդիան, ինքնավարութիւն ստա-նալուց յետոյ, կը ճնշի բողոքականներին: Վեր-ջապէս, ժողովը բողոքեց այն ճնշումների դէմ, որոնց ենթարկվում են իրլանդացի կապալառու-ները: Ժողովը հրապարտեց և կառավարութեանը միջոցներ ձեռք առնել, որպէս զի ապագայում տեղի չունենան սարսափելի խառնակութիւններ ճնշուների պատճառով:

—Պոլսից հեռագրում են, որ իշխան Ալէքսան-դրի ամենահաւանական յաջորդ Բ. Գուսեը համա-րում է Գանիայի իշխան Վոլդեմարին:

—«Morning Post» հաղորդում է, որ գերմանա-կան դեսպան Հայֆելդը ստացել է հրաման իր կառավարութիւնից ամենայն կերպ օգնելու Անգ-լիային արեւելքում status quo-ն ապահովացնելու համար:

—Բիսմարկի առողջութիւնը լաւանում է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

1887 թ-ի յունիսի 29-ին լրանում է ռուսաց երեւելի գրող բանաստեղծ հանգուցեալ Պուշկինի մահուան յիսնամեակը: Խուսաց ինտելիգենցիայի և լրագրութեան մի քանի շրջաններում միտք է յարուցված ըստ արժանոյն տօնելու այդ նշանա-ւոր յիսնամեայ յօրեկանը:

Վարչապետ մի քանի ժամանակից յետոյ կը սկսուեն հրատարակվել հետեւեալ նոր լրագիրները. «Visla», որը նուիրված կը լինի ազգագրական—աշխարհագրական հարցերին, «Tello» շաբաա-գործութեան հարցին, և «Gloss», որը կը լինի մի հասարակական-գրականական ուղղութեան շա-բաթաթերթ:

Խալովի հիւանդոցներից մէկում, օգոստոսի 28-ին, երեկոյան 8 ժամին, ինքնասպանութիւն գործեց ատրճանակով տիկին Կորսակովա, որը 28 տարեկան էր դեռ ևս և նիւթակա-նապէս ապահովուած: Կորսակովա շատ զեղե-ցիկ էր սկզբում, և սակայն սաստիկ ծա-ղիկ հանելուց յետոյ, ստացաւ մի տե-սակ հոգեկան հիւանդութիւն և դար-ձաւ մեղամաղձոտ: Կորսակովա թողեց մի քա-նի նամակներ, որոնցից մէկի մէջ, ի միջի այլոց, գրած է հետեւեալը. «Կորսակովա անտանելի է: Տխրութիւնը միշտ տիրապետում է ինձ, և ապա-գաս ինձ աւելի ու աւելի մտայն է թուում: Ես սիրում եմ բնութիւնը, մինչդեռ իմ հոգեկան մը-ռայլ դրութիւնն անտարբեր է դարձնում ինձ դէ-պի բնութեան հրաշալիքները: Կը նշանակէ թէ բնութեան պանծալի յատկութիւններն անգամ ինձ վրա ազդեցութիւն ունենալ չեն կարող: Ես ունեմ նիւթական միջոցներ, և ինձ թուում է, թէ կարող եմ բնակութիւն հաստատել զեղեցիկ ծովի ափին, և արեգակի դուրս եկող և մայր ժողով ճառագայթների ջրի մէջ ցոլանալուց և փոփոխ-վելուց յիշել իմ անցեալը և ներկան... Բայց դը-րան անհրաժեշտ պայմանները ես չունեմ...»:

ՄՇԱԿԻ ՀՆՈԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՍՕՖԻԱ, 8 սեպտեմբերի: Խնամակալներին նշա-նակված է տարեկան 24,000 ֆրանկ ռոճիկ: Սօ-ֆիայում մնացած ըուձէլիական գունդը շաբաթ օր դուրս գնաց դէպի Ֆիլիպպոպոլ: Այդ գնդի մէջ կային Ստրումի գնդից 150 զինուոր, որոնք մա-նակից են եղել Բատտենբերգին գահընկէք անելուն: Ստրումի գնդի գրօշակը այրվեցաւ Բագովորում, որտեղ գունդը պէտք է հպատակվէր Բատտեն-բերգի կողմնակիցներին: Երէկ Սօֆիայում ոչնչա-ցրին իսկներների ռուսամարտի դրօշակը, որը նոյնպէս մասնակից է եղել օգոստոսի 9-ի յեղա-փոխութեան:

ՄԵՐՎ, 8 սեպտեմբերի: Տեղեկութիւն է ստաց-ված, որ արդէն 15 օր է, ինչ Ֆեյզաբադի մօտ աւաղանցիների և բաղախանջիների մէջ պատե-րազմական գործողութիւնները չեն վերջանում: Աւաղանցիները մտադիր են վերջնականապէս են-թարկել իրանց իշխանութեանը անհանգիստ բա-ղախանջիներին: Անգլիական զօրքերը կենտրո-նացած են Չիտրալում, և չէզօր դիրք են բռնել:

ՍՕՖԻԱ, 8 սեպտեմբերի: Ռուսաց հիւպատոսը ուղղեց Բագուական կառավարութեանը մի յա-յտագիր, որի մէջ պահանջում է, որ սպաների և օգոստոսի 9-ի յեղափոխութեան ժամանակ ձեռ-բակալված ուրիշ անձանց դատաստանը յետա-ձգվէր, մինչև մտքերի աւելի խաղաղ դրութեան հասնելը: Գերմանիան իր կողմից հաւանութիւն տուեց Ռուսաստանի պահանջին, յայտարարելով, մի և նոյն ժամանակ, որ յանցաւորների հետ ոչինչ այնպիսի բան չանուի, որը ունենար պա-տիժի բնաւորութիւն, մինչև գեներալ Կաուլբաքի գալը. հաւանական է, որ պաշտօնական պատաս-խանը կը կազմվի այն մտքով, որ ընտրվելը չի դադարեցվի, բայց յամենայն դէպս, դատաստա-նական ընտրվելը չէ կարող սկսվել:

ՄԱԳԻԴԻ, 8 սեպտեմբերի: Այստեղ ծագեց զին-ւորական ապստամբութիւն, գիշերը տեղի ունե-ցան աղմկալից տեսարաններ, ամբողջ գոյում էր «կեցցէ հանրապետութիւնը»: Ապստամբված զը-նքերը դիմեցին դէպի անբը՝ միւս զօրքերին էլ իրանց կողմը զցելու նպատակով, բայց հանդիպե-ցին դիմադրութեան և ցրվեցան: Այժմ ապստամբ-ները տեղափոխվել են Մադրիդի չորս կողմում:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 սեպտեմբերի: Երէկ, առաւօտ-եան 11 ժամին, Բոլոգովից դէպի Պետերբուրգ ե-կող ուղևորների գնացքը երրորդ կարգի վերջին վագոնը դուրս եկաւ դից Նիկոլաեւիկան ճանա-պարհի Լիւբան կայարանի մօտ, բաժանվեց զը-նացքից և չորս սաժէն բարձրութեան հողաթմբից զլորվեց դէպի ներքեւ, իր տակը պահելով մէջը:

